ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«23» հոկտեմբեր 2017թ. N 311-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարությանը հավանություն տալու մասին» արձանագրային որոշման N 1 հավելվածի 3.1, 3.2, 3.5, 3.6, 5.1, 10.1 կետերը.

Հրամայում եմ՝

Հաստատել՝

1. Ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկը, համաձայն հավելված N 1-ի,
2. Ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանման մեթոդական ձեռնարկը, համաձայն հավելված N 2-ի,
3. ՀՀ ԱԺ, ՀՀ կառավարության և ՀՀ պետական մարմինների կողմից Ծրագրային բյուջետավորման ձևաչափով պաշտոնապես հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթերի ձևաչափերի և դրանցում տեղեկատվության ներկայացման պահանջները, համաձայն հավելված N 3-ի,

4. ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումները, համաձայն հավելված N 4-ի,

5. Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույց, համաձայն հավելված N 5-ի,

6. Ոլորտային ռազմավարությունների մշակման մեթոդական ուղեցույցները, համաձայն հավելված N 6-ի,

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ